ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՋԱՍՊ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

Բանալի բառեր *– Թեոդորոս Ռշտունի, Համազասպ Մամիկոնյան, Ներսես III Տայեցի, Գրիգոր Մամիկոնյան, Արաբական խալիֆայություն, հայոց իշխան, Մուավիա*

652 թ. Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուավիայի միջև կնքվում է պայմանագիր[1]: Այդ պայմանագրով Հայաստանը հարևանների հանդեպ առաջին հայացքից ստանում էր գերակայություն և մի շարք արտոնություններ: Սակայն կարճ ժամանակ անց Բյուզանդական կայսրության նկատմամբ ժամանակավորապես հաղթանակի հասած Արաբական խալիֆայությունը շատ արագ դեն նետեց ամեն մի ձևականություն, և 654 թ.[2] նրա զորամիավորումները Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ ռազմակալեցին ամբողջ Հայաստանը և Այսրկովկասը: Դրանով ի չիք դարձավ 652 թ. կնքված հայ-արաբական պայմանագիրը: Դա բխում էր արաբների շահերից, և ինչպես կարծում են ոմանք, ամենևին հայկական դիվանագիտության հաղթանակը չէր, քանի որ արաբներն այդ պայմանագրով դեռևս պետք է հաստատվեին Հայաստանում[3], իսկ գահակալական կռիվներում մխրճված Մուավիան ի դեմս Հայաստանի ձեռք բերեց հուսալի դաշնակցի՝ ընդդեմ իր ախոյանների[4]: Հաբիբ իբն Մասլաման կարճ ժամանակահատվածում գրավեց ամբողջ տարածաշրջանը, այդ թվում նաև քաղաքական կենտրոն Դվինը[5]: Հետագայում հայերի անցանկալի ելույթներից խուսափելու

---

[1] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի (այսուհետև՝ **Սեբեոս**), աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 164:

[2] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ, Թեոփանես Խոստովանող, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (այսուհետև՝ **Թեոփանես Խոստովանող**), Երևան, 1983, էջ 56, **Եղիազարյան Ա.**, Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2008, թիվ 2, էջ 68-77:

[3] **Վարդանյան Ա.**, Հայ նախարարների դիրքորոշումն արաբական առաջին արշավանքների նկատմամբ // «ԼՀԳ», 2016, թիվ 3, էջ 132-133:

[4] Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայաստանի պետական համակարգը Օմայանների օրոք (640-750 թթ.) // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2015, թիվ 2, էջ 230:

[5] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի (այսուհետև՝ **Արաբ մատենագիրներ**), Երևան, 2005, էջ 270-272:

համար արաբ զորավարը գերեվարեց հայ ազնվականության զգալի մասին, այդ թվում ապագա Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին և Սմբատ Բագրատունուն[1]: Տեսնելով, որ իր արաբամետ կողմնորոշումը ոչինչ չտվեց Հայաստանին, երկիրը մատնեց ավերի ու թալանի, Թեոդորոս Ռշտունին կատարեց հուսահատ քայլ. ինքնակամ միացավ արաբական զորախմբին՝ հույս ունենալով Միջագետքում շտկել հայ-արաբական անհեռանկար հարաբերությունները: Պատմիչն այդ առիթով նշում է. «Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն համազգեաւքն իւրովք գնաց ընդ նոսա. և տարեալ իջուցին զնոսա յԱսորեստան: Անդ մեռաւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն, և մարմին նորա բերաւ ի գաւառ իւր, և թաղեցաւ ի գերեզմանի հայոց իւրոց»[2]: Թեոդորոս Ռշտունին, որ խաճվել էր արտաքին քաղաքականության հարցերում, խաբվեց արաբների խոստումներից՝ ի վերջո զոհ գնալով իր իսկ արտաքին քաղաքականությանը[3]: Ինչպես նկատել է Ս. Մելիք-Բախշյանը՝ «Հաբիբ իբն-Մասլամայի արշավանքով վերջնականապես բացահայտվեցին Արաբական խալիֆայության իսկական ու նրա ունեցած բացահայտ նվաճողական դիտավորությունները Հայաստանի նկատմամբ[4]»: Սակայն այդ ժամանակահատվածում խալիֆայությանը չհաջողվեց իր տիրապետությունը վերջնականապես հաստատել Հայաստանում, քանի որ 655 թ. նա ստիպված եղավ իր զորամիավորումները դուրս բերել Հայաստանից երկրի ներսում շարունակվող ապստամբությունների պատճառով: Մինչ Թեոդորոս Ռշտունին գտնվում էր Ասորիքում, հայ նախարարների և կաթողիկոս Ներսես Գ Տայեցու (641-661) ջանքերով Հայոց իշխան է դառնում Դավիթ Մամիկոնյանի որդի Համազասպը. «Եւ ունէր զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ

---

[1] Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ **Ղևոնդ**), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 14:

[2] **Սեբեոս**, էջ 174: Ուսումնասիրողները միակարծիք չեն Թոդորոս Ռշտունու մահվան տարեթվի վերաբերյալ. ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը նշում է 654 թ. (**Saint-Martin M.**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 337): Թոդորոս Ռշտունու իշխանության ավարտը Ա. Տեր-Ղևոնդյանը համարում է 654 թվականը (**Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 46, 270): Նույն թվականն է ընդունում նաև Վ. Վարդանյանը (**Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 327): 656 թվականն են նշում Մ. Ղազարյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Վ. Իսկանյանը (տե՛ս **Ghazarian M.**, Armenien unter der arabischen Herrschaft, bis zur Entstehung des Bagratidenriches // "Zeitschrift für armenische Phililogie", Bd. II, H. 2-3, 1903, S. 32, **Մելիք-Բախշյան Ս.**, Հայաստանը VII-XI դարերում, Երևան, 1968, էջ 83, **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991, էջ 504): Հավանական ենք համարում 656 թվականը (տե՛ս **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 132):

[3] Մինչև վերջ հավատարիմ մնալով արաբներին՝ Թեոդորոս Ռշտունին իր որդուն՝ Վարդին, խորհուրդ է տալիս շարունակել բարեկամությունը արաբների հետ (տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 1522, թ. 529բ):

[4] **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 85:

Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս»[1]: Իսկ պատմիչ և հետագայում կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին ավելացնում է. «Հայրապետն Հայոց Ներսէս յետ վեց ամի հալածանաց իւրոց՝ իբրև լուաւ զվախճանն Թէոդորոսի և զդադարումն Իսմայէլեան ասպատակին, դարձաւ անդրէն ի տեղի իւր: Եւ միախորհ ապա լեալ ընդ նախարարացն՝ իշխան ի վերայ Հայաստանեայցս կացուցանեն զՀամազասպ Մամիկոնեան, որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր և վարժ ի բոլոր հրահանգս, և զնախնական քաջութեացն պայման միշտ ջանայր լրութեամբ կատարեալ մրցարանաց կրթութեամբ»[2]: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ամբողջությամբ տապալվել էր Թեոդորոս Ռշտունու արաբամետ կողմնորոշումը, երկիրը մի քանի անգամ թե՛ արաբների կամքով և թե՛ Ռշտունյաց տիրոջ կանչով ավերի ու ավարի էր մատնել:

Համազասպ Մամիկոնյանի[3] կառավարման կարճատև ժամանակահատվածում (655-661)[4] երկրում խաղաղություն տիրեց: Բյուզանդիայի կայսրը, որ անսացել էր Հայոց կաթողիկոսի խնդրանքին Համազասպ Մամիկոնյանին Հայոց իշխան նշանակելով, վերջինիս ուղարկեց արծաթե գահ[5]: Դա նշանակում էր, որ Բյուզանդիան իրավաբանորեն ճանաչում էր Հայաստանի վերամիավորումը և հայկական անկախ իշխանապետությունը, քանի որ Արաբական խալիֆայության հետ առաջիկա զոտեմարտում, որն ի դեպ շատ չուշացավ, փորձում էր Հայաստանը պահել իր արտաքին քաղաքականության ոլորտում:

---

[1] **Սեբեոս**, էջ 174: Ամենայն հավանականությամբ Համազասպ Մամիկոնյանը, բացի Գրիգորից, ունեցել է նաև ավագ եղբայր՝ Մուշեղ Մամիկոնյանը, որը մասնակցել է 637 թ. Քադեսիայի նշանավոր ճակատամարտին՝ իբրև Հայաստանից մեկնած զինական ուժերի հրամանատար, որի մասին պատմիչը նշում է. «Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց երեք հազար սպառազինաւք» (տե՛ս **Սեբեոս**, էջ 137): Սասանյանների համար այդ վճռորոշ ճակատամարտում զոհվում է Մուշեղ Մամիկոնյանը: Թե՛ Մուշեղը և թե՛ Համազասպը Դավիթ Մամիկոնյանի որդիներն էին:

[2] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), Թիֆլիս, 1912, էջ 88:

[3] Համազասպ Մամիկոնյանն ունեցել է կյուրոպաղատի տիտղոս (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 16, **Սեբեոս**, էջ 175):

[4] Հայոց իշխանի պաշտոնում Համազասպ Մամիկոնյանի կառավարման մասին նշում է Ասողիկը. «Խնդրոյ Ներսիսի լինի Համազասպ հրամանատար Հայոց»: Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ **Ասողիկ**), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99: Ուսումնասիրողները միակարծիք չեն Համազասպ Մամիկոնյանի Հայոց իշխան դառնալու թվականի վերաբերյալ (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 86, **Դանիելյան Է.**, Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 222, **Մինասյան Է.**, **Եղիազարյան Ա.**, Հայ դիվանագիտությունը VII դարում // «Լրատու» (Ստեփանակերտ), 2008, էջ 15):

[5] Տե՛ս **Սեբեոս**, էջ 175:

Համազասպ Մամիկոնյանը, գտնվելով բյուզանդամետ խմբավորման ազդեցության ներքո՝ ի դեմս Ներսես կաթողիկոսի[1], կամա թե ակամա վերակողմնորոշվեց դեպի կայսրություն: Չհանդուրժելով հայերի քաղաքական շրջադարձը և չկարողանալով նոր արշավանք ձեռնարկել դեպի Հայաստան՝ Օսման խալիֆը (644-656) հրամայեց արաբական գերության մեջ գտնվող 1775 ազնվականի կոտորել: Այդ սպանդից փրկվեց միայն 22-ը[2]: Ինչպես Լեոն է նշում, «այդքան թանկ գնով Հայաստանը ձեռք է բերում մի համեմատաբար նախանձելի անդորրություն»[3]: Հայ իշխող քաղաքական վերնախավը՝ Համազասպ Մամիկոնյանի գլխավորությամբ, զգալով, որ իրադրությունը բարենպաստ է իրենց քաղաքական ծրագրերն իրականացնելու համար, և երկու մեծ տերությունները զբաղված են իրենց ներքին գործերով, ավելի առաջ տարան հայկական հողերի վերամիավորման՝ Թեոդորոս Ռշտունու սկսած գործը: Նշենք, որ 639 թ. Ռշտունյաց տերը կարողացել էր բյուզանդական Հայաստանի մեծ մասը միավորել արևելյանին[4]: Մամիկոնյան իշխանի օրոք ավելի ամրապնդվեց այդ գործընթացը: Դա 408 թ.[5] հետո բացառիկ իրադարձություն էր հայ ժողովրդի պատմության մեջ, քանի որ շուրջ երեք հարուրամյակ անց կրկին վերամիավորվեցին Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածները: Վերամիավորված Հայաստանի սահմանները դժվար է ամբողջությամբ վերականգնել: Սակայն պատմիչների աշխատանքներում պահպանված կցկտուր տեղեկություններից կարելի է եզրակացնել, թե ինչ նախարարություններ են դրա մաս կազմել: Ինչպես գիտենք, Հայաստանի՝ 591 թ. երկրորդ բաժանումից հետո մարզպանական Հայաստանի մեծ մասն անցավ Բյուզանդիային[6]: Մյուս մասը՝ Հյուսիսային քուստակի կազմում,

---

[1] Նշենք, որ Ներսես Գ-ն 653 թ. գնացել էր Տայքի իր ծննդավայր Իշխան գյուղը՝ չցանկանալով դառնալ իր կուսակիցների և արաբամետ խմբավորման միջև հնարավոր եղբայրասպան պատերազմի պատճառ (տե՛ս **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 129-131): Կաթողիկոսը Տայքից վերադարձավ 659 թ.:

[2] Տե՛ս **Մեբեռոս**, էջ 175, ծան. 663:

[3] Տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն // Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 318:

[4] Տե՛ս **Մեբեռոս**, էջ 138: Մանրամասն տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 19-20:

[5] 387 թ.՝ Հայաստանի առաջին բաժանումից հետո, Խոսրով IV-ը, Արշակ III-ի մահից հետո օգտագործելով քաղաքական բարենպաստ իրադրությունը, իր թագավորությանը միացրեց Հայաստանի բյուզանդական հատվածը (տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, Գ, գլ. ԽԹ, էջ 319-320): Սակայն 408 թ. Թեոդոսիոս Բ կայսրը (408-450) վերադարձնում է Մեծ Հայքի արևմտյան հատվածը:

[6] Սահմանաբաժանումը մանրամասն տե՛ս **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 231-235, **Երեմյան Ս.**, Հայաստանը V-VII դդ. // Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1952, **Դանիելյան Է.**, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629) // «ԼՀԳ», 1986, թիվ 8, էջ 55-67, **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 325-338, **Հարությունյան Բ.**, Հայաստանը ուշ մարզպանության շրջանում (527-640 թթ.) // Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 35:

մնաց Պարսկաստանի տիրապետության տակ[1]: Սակայն այս վիճակը տևեց շուրջ կես դար, և այդ պայմանագիրն ի չիք դարձավ պարսկական պետության կործանմամբ և Բյուզանդիայի պարտությամբ: Խնդրո հարցի վերաբերյալ մեզ որոշ տեղեկություններ է հաղորդում Սեբեոսը. 652 թ. աշնանը Կարինում բյուզանական Կոստանդ Բ կայսրի և հայ նախարարների հանդիպման հետ կապված նա նշում է. «Եւ նստաւ արքայ Կոստանդին ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ. անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք և զաւրք Չորրորդն կոչեցեալ Հայոց, և այլ ամենայն զաւրք և իշխանք, որ յայնմ կողմանէ գնացեալ էին յՌշտունականէն: Ընդ առաջ ելին նմա Սպերացիքն, իշխանքն Բագրատունեաց, և Մանաղայքն, և Դարանաղայքն, և որք յԵկեղեաց գաւառէ, և ամենայն զաւրք տեղեացն այնոցիկ, և Կարնացիք, և Տայեցիք, և Բասենացիք: Եւ անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք Վանանդայ հանդերձ զաւրուն իւրեանց, և Շիրակացիք, և Խոռխոռունին, և արք տանն Դիմաքսենից: Անդ ընդ առաջ եղև նմա Մուշեղ Մամիկոնեան համազգեաւքն իւրոք հանդերձ և այլովք ոմամբք իշխանաւք, և զաւր ըստ Այրարատայ կողմանէ. Առաւեղեանք, և Առանեանք և Վարաժնունիքն, և Գնթունիք և Սպանդունիք, և այլք ընդ նոսին»[2]: Վերը նշված երկու տասնյակ նախարարների գերակշիռ մասը Հայաստանի արևմտյան շրջաններից էին: Ինչպես նախորդ դարերում, VII դարի կեսերին ևս հայ նախարարները պահպանել էին իրենց տիրույթների զգալի մասը: Հարկ է նկատի ունենալ, որ նրանցից ոմանք Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ հակառակ դիրքորոշում ունեին և չէին եկել կայսեր բանակատեղի: Կայսրին ներկայացավ նաև Գարդմանա տեր և Աղվանից առաջին իշխան Ջուանշիրը (642-683)[3]: Այստեղ իհարկե չի հիշատակվում Կենտրոնական Հայաստանի մի շարք նախարարությունների մասին, որոնք, սակայն, այսպես թե այնպես միավորված Հայաստանի մաս կազմեցին:

VII դարի «Աշխարհացոյց»-ում հիշատակած Մեծ Հայքի 15 աշխարհների մեծամասնությունը վերստին վերամիավորվեց Հայաստանի կազմում, այդ թվում՝ նախկին մարզպանական Հայաստանը, 461թ.[4] վերջինիցս անջատված Արցախը և Ուտիքը, և ինչպես քիչ հետո կտեսնենք, նաև Սյունիքը: Վերմիավորված Հայաստանի կազմում էին ընդգրկվում նաև նախկինում բյուզանդական տիրապետության տակ գտնվող հայկական տարածքների զգալի մասը, ինչպես նաև տարածքներ Կուրի ձախափնյա շրջաններից՝ Կամբեճան գավառը 7510 կմ² տարածքով (ինչպես կտեսնենք ստորև, Ջուանշիրը վասա-

---

[1] Տե՛ս «Աշխարհացոյց» Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 40:

[2] **Սեբեոս**, էջ 165:

[3] Այդ հանդիպման մասին մանրամասն տե՛ս **Վարդանյան Ա.**, Աղվանքը VII դարի կեսերին // «ՊԲՀ», 2015, թիվ 2, էջ 247-248:

[4] Մարզպանական Հայաստանից Ուտիքի և Արցախի անջատման թվականի մասին տե՛ս **Վարդանյան Ա.**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Երևան, 2013, էջ 136-155:

լական պարտավորություն ուներ Հայոց իշխանից, իսկ Կամբեճան գավառը ենթակա էր նրա իշխանապետությանը)[1]: Շարունակելով հայկական հողերի վերամիավորումը՝ Հայոց իշխանը չէր կարող հանդուրժել Սյունյաց իշխանների կենտրոնախույս ձգտումները: Բան այն էր, որ Սյունյաց իշխան Վահանը 571 թ. խնդրել էր պարսից Խոսրով թագավորին Սյունիքից գանձվող հարկը Դվինից տեղափոխել Ատրպատական[2]: Պարսից արքունիքը դրան ընդառաջել էր, և ինչպես իրավացիորեն նկատել է Բ. Հարությունյանը, «հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա Սյունյաց իշխանների դիրքն Այսրկովկասում ամրապնդելու պարսկական տիրապետության քաղաքական ծրագրի արտահայտությունն էր»[3]: Պարսից արքունիքին վաղուց էր հայտնի, որ Սյունյաց նախարարական տունը դարերի ընթացքում միշտ ունեցել է պարսկական դիրքորոշում և ամեն կերպ խրախուսել անջատողական՝ վարչատարածքային, հարկային թե եկեղեցական ձգտումները[4]: Համազասպ Մամիկոնյանին հաջողվում է Սյունիքը և Արցախը միավորել Հայաստանին. «Հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զաւրացն Աղուանից և իշխանացն աշխարհին Սիւնեաց հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչև բարձաւ թագաւորութիւնն Պարսից և տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն և նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց»[5]: Սա ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կարևոր նշանա-

---

[1] Նախորդ շրջանում ևս Կամբեճան գավառը հայոց թագավորության մասն է կազմել: Տե՛ս **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 88-94 և կից քարտեզը:

[2] Տե՛ս **Սեբեոս**, էջ 67-68: Հարկահավաքության գործի տեղափոխումը Դվինից ադրբեջանցի կեղծարարության «դասական» Զ. Բունիաթովին առիթ է տվել պնդելու, որ Սյունիքը համարվել է Աղվանքի մաս (տե՛ս **Буниятов З.**, Размышления по поводу книги А. Н. Тер-Гевондяна, Армения и Арабский халифат // «Известия АН АзССР», 1977, № 4, с. 116): Զ. Բունիաթովի մտավարժանքներին հետևում են ադրբեջանցի գրեթե բոլոր ուսումնասիրողները (տե՛ս **Мамедова Ф.**, Об исторической географии Кавказской Албании, Армении и албаском этносе // udi. az/articles/0052. htm/., **Мехтиев Р.**, Горис-2010: сезон театра абсурда // http://www. Ínews. az. s. 29.10.2010 և ուրիշներ): Ադրբեջանցի կեղծարարների հիմնազուրկ փաստարկների հերքման մասին տե՛ս **Հարությունյան Բ.**, Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն, Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևի «Գորիս-2010. Աբսուրդի թատրոնի տարեշրջանը» գիտաքաղաքական ածպարարությունը // «Վեմ», 2010, թիվ 4, էջ 24-56, **Շահնազարյան Ա.**, Մարտահրավեր գիտությանը, կրկին Ռամիզ Մեհթիևի «գլուխգործոցի» մասին // «Վեմ», 2011, թիվ 2, էջ 164-183, **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 69-83:

[3] **Հարությունյան Բ.**, Փայտակարան քաղաք և նրա տեղադրությունը // «ԼՀԳ», 1981, թիվ 12, էջ 68:

[4] Ատրպատականի փոխարքայություն հարկային դիվանի տեղափոխմանը զուգահեռ՝ Հայ Առաքելական եկեղեցու իրավասությունից փորձեցին դուրս գալ նաև Սյունիքի և Արցախի թեմերը, և ինչպես Ն. Ակինյանն է նշում, որպեսզի ազատագրվեն Մամիկոնյանների արևմտամետ ազդեցությունից: Այդ մասին տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 91, 99:

[5] **Սեբեոս**, էջ 175, ծան. 665:

կություն ունեցող երևույթ էր[1], ինչը խթանելու էր Հայաստանի հետագա զարգացումը թե՛ ներքին և թե՛ արտաքին առևտրի ասպարեզներում: Ինչպես իրավացիորեն նշել է Ա. Տեր-Ղևոնդյանը, «Համազասպ Մամիկոնյանի օրոք հիմնականում ավարտվեց Հայոց իշխանապետության հողերի ամբողջացումը»[2]: Նշենք, որ, բացառությամբ մի քանի ծայրագավառների, վերականգնվում է Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի Մեծ Հայքի տարածքը:

Սակայն շուտով խալիֆայությունը ազատվում է գահակալական արյունահեղ երկպառակություններից: Ալի խալիֆայի (656-661) սպանությունից հետո միահեծան տիրակալ դարձած Մուավիան (661-680) կարողանում է կայունացնել երկրի ներքին վիճակը և անցնել արտաքին նվաճումների[3]:

Մինչ Հայաստանից դուրս սկսվել և նոր թափ էին ստացել ռազմական գործողությունները ժամանակի երկու մեծ տերությունների միջև[4], հայ իշխող ավագանին՝ ի դեմս Հայոց իշխանի և կաթողիկոսի, կողմնորոշվեց դեպի խալիֆայությունը, քանի որ վերջինս կարճ ժամանակում նորից տեր ու տնօրինություն էր անում Մերձավոր Արևելքում՝ Բյուզանդիային դուրս մղելով տարածաշրջանից: Երբ 661 թ. անսպասելիորեն մահանում է Հայոց իշխան և կյուրոպաղատ Համազասպ Մամիկոնյանը[5], կաթողիկոսը և նախարարները դիմում էին խալիֆ Մուավիային, որպեսզի վերջինս Հայաստանի Հայոց իշխան ճանաչի Գրիգոր Մամիկոնյանին[6]: Վերջինս այն 22 ազնվականների թվում էր, որոնք պատահականորեն փրկվել էին արաբական սպանդից: Մուավիան, պատրաստվելով գոտեմարտի Բյուզանդիայի հետ, ամեն գնով փորձում էր սիրաշահել հայ ավագանուն: Ինչպես Ղևոնդն է նշում, «եւ զայր Գրիգորի զպատիւ իշխանութեանս Հայոց. և առաքէ զնոսա բազում մեծարանօք յաշխարհս Հայոց»[7]: Գրիգոր Մամիկոնյանի երկարատև կառավարման[8] ժամանակահատվածում (661-685)[9] վերականգնվում է հայ-արաբական 652

---

[1] **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 89:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև **Тер-Гевондян А.**, նշվ. աշխ., էջ 47:

[3] Տե՛ս Արաբ մատենագիրներ, էջ 114, 212, 349-350, **Թեոփանես Խոստովանող**, էջ 57-58, ծան. 340:

[4] Տե՛ս История Византии, т. I, М., 1967, с. 369:

[5] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 89:

[6] Տե՛ս նույն տեղում, **Ասողիկ**, էջ 99:

[7] **Ղևոնդ**, էջ14:

[8] Կիրակոս Գանձակեցին ակնհայտորեն շփոթում է՝ Գրիգոր Մամիկոնյանին հատկացնելով տասնամյա կառավարման շրջան և ակամայից տուրք տալով նախորդ ժամանակահատվածին՝ նրան կոչում է մարզպան (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 63):

[9] Ուսումնասիրողները միակարծիք չեն Գրիգոր Մամիկոնյանի իշխանության անցնելու տարեթվի վերաբերյալ. Լեոն, Ա. Տեր-Ղևոնդյանը նշում են 661 թ. (տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., էջ 319, **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 93, **Тер-Гевондян А.**, նշվ. աշխ., էջ 270, իսկ Ն. Ադոնցը, Է. Դանիելյանը և Ա. Եղիազարյանը՝ 662 թ. (տե՛ս **Ադոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու,

թ. կնքված պայմանագիրը, սակայն ավելանում է այն կետը, որով Հայաստանը պարտավորվում էր խալիֆայության գանձարանին տրամադրել տարեկան 500 դահեկան խորհրդանշական հարկ[1]: Բայց դրան զուգահեռ, ըստ Ասողիկի, Մուավիան Մամիկոնյան իշխանին «հաստատեաց Հայոց և Վրաց»[2] կառավարիչ: Սա նշանակում է, որ Գրիգոր Մամիկոնյանը ոչ միայն նշանակվում էր Հայոց իշխան, այլև Այսրկովկասի կառավարիչ: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Եղիազարյանը, «Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունն արաբների կողմից ճանաչվել է այն սահմանների վրա, ինչ Թեոդորոս Ռշտունու իշխանությունը»[3], այն է՝ «զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ»[4]: Սա ոչ թե արաբների բարյացկամության շնորհիվ էր, այլ Թեոդորոս Ռշտունու և Համազասպ Մամիկոնյանի ջանքերով մի քանի տարի առաջ վերամիավորված Հայաստանն իրենից արդեն տարածաշրջանում լուրջ ուժ էր ներկայացնում՝ թե՛ տարածքով և թե՛ ռազմուժով զգալիորեն գերազանցելով Աղվանքին և մասնավորապես Վիրքին: Խալիֆայությունը, հասկանալով այդ, ջանում էր Հայաստանը գոնե ձևականորեն պահել իր ազդեցության ոլորտում՝ փորձելով կտրել բյուզանդական ավանդական կողմնորոշումից: Իսկ հետագայում, երբ նա հաղթող դուրս կգար թե՛ ներքին և թե՛ արտաքին ասպարեզներում, կվերացներ Հայաստանի ինքնավարությունը, ինչը հաջողվեց 700 թ., երբ արաբները կազմավորեցին Արմինիա ոստիկանությունը՝ Դվին կենտրոնով[5]: Դրանից մի քանի տարի անց՝ մասնավորապես 705 թ., նրանք դեն կնետեն ամեն մի ձևականություն, Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում կայրեն հայ ազնվականությանը[6], որից հետո երկար տասնամյակներ Հայաստանը չի կարող ուշքի գալ արաբների հասցրած այդ աննախադեպ հաշվեհարդարից:

Ինչպես վերը նշել ենք, Գրիգոր Մամիկոնյանն արաբների կողմից ճանաչվեց «իշխան Հայոց»: Ա. Տեր-Ղևոնդյանի համոզմամբ՝ «առաջին Հայոց իշխանը, որն ուղղակի արաբների կողմից էր նշանակված, Գրիգոր Մամի-

---

աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հ. Հովհաննիսյանը, Էջմիածին, 2005, էջ 65, **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 226, **Եղիազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, 2010, էջ 26): Ս. Մելիք-Բախշյանը և Վ. Իսկանյանը, չհստակեցնելով, նշում են 662/663 թթ. (տե՛ս **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 86, **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 508-509): Հավանական ենք համարում Ա. Տեր-Ղևոնդյանի տեսակետը, քանի որ Մուավիայի երկրորդ տարին իսկապես 661 թ. է: Եթե խալիֆը գահ է բարձրացել 660 թ., ապա առաջին տարի պետք է համարել 660 թվականը, իսկ երկրորդը՝ 661 թ.:

[1] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 14:

[2] **Ասողիկ**, էջ 122:

[3] **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 26:

[4] **Մեքենս**, էջ 169: Սյունիքն առանձին է հիշատակվում այն պարզ պատճառով, որ Թեոդորոս Ռշտունու ժամանակ, ինչպես տեսանք, Սյունյաց իշխանը հարկերն ուղարկում էր Ատրպատական:

[5] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 29:

[6] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 108-109:

կոնյանն էր (661 թ.)»[1], որի իշխանությունը տարածվում էր Վիրքի և նախկին Բուն Աղվանքի վրա: Մամիկոնյան իշխանի տիրապետությունն իր սահմաններով գերազանցում էր նույնիսկ 387 թ. հետո Արշակունիների թագավորների իրավասության ներքո գտնվող տարածքները: Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը դարձավ ամբողջական: Ինչպես նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը, այն ընդգրկեց Այրարատը, Տուրուբերանը, Բարձր Հայքը, Ծոփքը (Դ Հայք), Տայքը, Գուգարքի հարավային մասը, Սյունիքը, Արցախը, Վասպուրականը, Մոկքը, ինչպես և Աղձնիքը ու Կորճայքի հյուսիսային լեռնոտ գավառները[2]: Հետագայում տարածաշրջանի նկատմամբ նման իշխանություն ունեին միայն Բագրատունի առաջին երկու գահակալները: Նախ Ասողիկը նշում է, որ Աշոտը «իշխանաց իշխան եղեալ Հայոց և Վրաց»[3], իսկ Սմբատ Ա-ն (890-914) «տիրէ բոլոր հայրենեաց իւրոց, Հայոց և Վրաց»[4]: Վիրքը և նախկին մարզպանական Աղվանքը[5] գտնվում էին Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ներքո: Հայոց իշխանն արտաքին հարաբերություններում ինքն էր ներկայացնում այդ երկրները:

Գրիգոր Մամիկոնյանի կառավարմամբ տարածաշրջանի երկրներում սկսեց խաղաղության երկարատև մի ժամանակաշրջան, քանի որ արաբա-բյուզանդական հակամարտությունը տեղափոխվել էր Փոքր Ասիա, և երկու հզոր տերությունների ուշադրությունից Այսրկովկասը դուրս էր մնացել: Նախ Մամիկոնյան իշխանը Հայաստանի քաղաքական կենտրոնը տեղափոխեց Արագածոտնի Արուճ ավանը, որտեղ կառուցվեց ապարանք և եկեղեցի. «Գրիգոր Մամիկոնեան հիմնադրեց զչքնաղագեղ եկեղեցի, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեզր քառաժայռ ձորակին»[6]: Արուճի եկեղեցում պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Ե հիմն արկեցավ սուրբ կաթուղիկէս ի ձեռն Գրիգոր Մամիկոնեանի հայոց

---

[1] **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 92:

[2] **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և հայոց տերությունը VII դարում: Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 193:

[3] **Ասողիկ**, էջ 158: Հմմտ. **Գրիգորյան Գ.**, Հայաստանի անկախության վերականգնումը և ամրապնդումը Բագրատունիների օրոք (IX դ. երկրորդ կես-X դ. առաջին երեսնամյակ) // Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 7:

[4] Նույն տեղում, էջ 161: Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Երևան, 2011, էջ 47 և կից քարտեզը:

[5] Պետք է նշել, որ Աղվանից մարզպանությունը որպես միասնական պետական միավորում VII դ. երկրորդ կեսին այլևս գոյություն չուներ (տե՛ս **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 155-158):

[6] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 90-91:

իշխանի և Հեղինէ ի Նորին զուկակցի ի բարեխաւսութիւն շինաւղաց զսա»[1]: Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում է, որ Արուճը Համազասպ Մամիկոնյանի օրոք ևս նստավայր է եղել[2], սակայն Գրիգորի ժամանակ այն վերակառուցվել է թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ նորանոր կառույցներով:

Եթե Այսրկովկասին և մասնավորապես Հայաստանին ժամանակավորապես չէին սպառնում արաբա-բյուզանդական հարձակումները, ապա այդ ժամանակ հաճախակի դարձան Հյուսիսային Կովկասից խազարների ասպատակությունները տարածաշրջան: Մինչ այդ նույնպես խազարական հորդան Ջեբու խաքանի և նրա որդու Շաթի գլխավորությամբ, օգտվելով մերթ Պարսկաստանի, մերթ Բյուզանդիայի թողտվությունից, ներխուժել էին տարածաշրջան և ավերի ու թալանի մատնել այն[3]: Գրիգոր Մամիկոնյանի կառավարման սկզբում՝ 661 թ., ևս մեկ անգամ Այսրկովկաս են ներխուժում խազարները: Հայոց Արևելից կողմանց իշխան Ջուանշիրը կարողանում է հաղթանակ տանել նրանց նկատմամբ[4]: Արշավանքը կրկնվում է նաև հաջորդ տարի: Ինչպես նկատել է Բ. Ուլուբաբյանը, «Ջուանշիրն իրեն զգում էր հին խոսքով ասած կողմնակալ հայոց ծայրագավառներից մեկի վրա»[5] և ուներ այն իրավունքները, ինչ Գուգարաց բդեշխն Արշակունիների շրջանում, և պարտավոր էր պաշտպանել Հայաստանի հյուսիսարևելյան գավառները: Խազարների դեմ մարտի ելած Ջուանշիրին հաջողվում է հաշտություն կնքել և ամուսնանալ խաքանի դստեր հետ[6]: Այդ քաղաքական ամուսնության շնորհիվ ավելի քան երկու տասնամյակ դադարում են խազարական արշավանքները տարածաշրջան: Սակայն որքան Մովսես Կաղանկատվացին փորձի Ջուանշիրին ներկայացնել որպես անկախ և ինքնուրույն տիրակալ[7], այնուամենայնիվ նա կախյալ վիճակում էր թե՛ Թոդորոս Ռշտունուց և թե՛ Համազասպ ու Գրիգոր Մամիկոնյաններից, քանի որ, ինչպես վերը տեսանք, այդ ժամանակ իրական ուժ ներկայացնող Արաբական խալիֆայությունը (Համազասպ Մամիկոնյանի պարագայում՝ Բյուզանդիան) տարածաշրջանի ամբողջ իշխանությունը հանձնել էր այս երեք գործիչներին:

---

[1] **Орбели И**., Багаванская надпись 639 года и другие армянские ктиторские надписи VII века // **Орбели И**., Избранные труды, Ереван, 1963, с. 402. Այդ մասին տե՛ս նաև **Казарян А**., Церковная архитектура стран Закавказья VII века, формирование и развитие традиции, т. III, М., 2013, с. 9-18:

[2] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա**., նշվ. աշխ., էջ 96:

[3] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Ադուանից աշխարհի (այսուհետև՝ **Մովսես Կաղանկատվացի**), քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 134-135, 153-154:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 186-187:

[5] **Ուլուբաբյան Բ**., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 247:

[6] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 190-191:

[7] Ն. Ադոնցը նույնպես Մովսես Կաղանկատվացու՝ Ջուանշիրին նվիրված շարադրանքի մեծ մասը համարում է «վեպ, քան պատմություն»: Տե՛ս **Ադոնց Ն**., նշվ. աշխ., էջ 69:

Նշենք մեկ փաստ ևս: Մուավիայի գահ բարձրանալով՝ փոխվել էր ուժերի իրական վիճակը, և սկզբնական շրջանում խալիֆայությունն էր ռազմադաշտերում թելադրողի դերում հանդես գալիս կայսրության նկատմամբ[1]: Հայ քաղաքական վերնախավը, տեսնելով, որ ուժերի հարաբերակցությունը փոխվել է հօգուտ խալիֆայության, Ջուանշիրի գլխավորությամբ 667 թ. պատվիրակություն ուղարկվեց Դամասկոս՝ խալիֆին այցելության[2]: «Արևելից մեծ իշխանը», ինչպես Ջուանշիրին մեծարում է Մովսես Կաղանկատվացին, հաջողությամբ ավարտում է բանակցությունները՝ վերադարձի ճանապարհին այցելելով Հայոց իշխանին: «Գայր հասանէր յԱյրարատեան գաւառն, ուր ընդ առաջ լինէր նմա ի Մամիկոնեան տոհմէն քաջ Գրիգոր համօրէն ազատօքն և ածէ զնա ի գիւղաքաղաքն իւր Արուճ»[3] խալիֆայի հետ բանակցությունների արդյունքները զեկուցելու համար:

Այսպես, շուրջ երկուսուկես հարյուրամյակ ընդմիջումից հետո Հայաստանը, շնորհիվ Մամիկոնյան երկու եղբայրների դիվանագիտական ջանքերի, երբ «եղև բազում խաղաղութիւն», վայելում էր բացարձակ անկախություն, քանի որ արաբա-բյուզանդական պատերազմի ավարտից հետո Հայոց իշխանը խալիֆայությանը չէր վճարում նաև խորհրդանշական 500 դահեկան հարկը[4]:

Գրիգոր Մամիկոնյանը և նրա եղբայրը, ինչպես վերը նշել ենք, ունեին արծաթե գահ, և հայոց աշխարհի առաջին տիկինը սկզբնաղբյուրներում հիշատակվում է «զդշխոյն Հեղինէ՝ զտիկինն Հայոց Մեծաց»[5]: Եղբայրների ջանքերով ստեղծվեց միացյալ և ինքնուրույն Հայաստան: Ճիշտ է՝ այն երկար կյանք չունեցավ և չէր կարող ունենալ, քանի որ աշխարհակալ Արաբական խալիֆայությունը, որը Մուավիայի մահից հետո կարճ ժամանակով նորից ընկղմվել էր գահակալական պայքարի մեջ, կարողացավ ուշքի գալ և վերջնականապես գրավել ամբողջ տարածաշրջանը և վերացնել հայկական անկախ իշխանությունը: Սակայն մինչ այդ կատարվեցին այնպիսի դեպքեր, որոնք արագացրին իրադարձությունները: Ջուանշիրի ու խազարների միջև 662 թ. կնքված և խնամիական կապերով ամրապնդված պայմանագիրը զսպող ուժ էր խազարների համար: Սակայն 683 թ. սեպտեմբերի 13-ին՝

---

[1] Սակայն հաղթականորեն սկսած պատերազմում արաբները վերջիվերջո պարտություն կրեցին: 678 թ. արաբական նավատորմն ամբողջությամբ կործանվեց, և Մուավիան ստիպված եղավ հաշտություն կնքել Բյուզանդիայի հետ՝ պարտավորվելով երեսուն տարի հարկ վճարել վերջինիս: Տե՛ս История Византии, т. II, М., 1967, с. 372:

[2] Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 194-195: Երկրորդ անգամ Ջուանշիրը խալիֆին այցելել է երկու տարի անց: Տե՛ս նույն տեղում, էջ 196-199:

[3] Նույն տեղում, 195: Ջուանշիրի քույր Հեղինեն ամուսնացած էր Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի հետ: Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 67: **Մովսես Կաղանկատվացի**, էջ 236:

[4] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 14:

[5] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 236:

Սուրբ խաչի տոնի օրը, Պարտավում սպանվում է Ջուանշիրը[1]: Վերջինիս հաջորդում է ոչ թե որդին, որը, ինչպես գիտենք, խազարների Խաքանի թոռն էր, այլ Ջուանշիրի եղբոր որդի Վարազ-Տրդատը (683-699, 705-709)[2]: Այս հանգամանքն ի չիք է դարձնում խազարների հետ կնքված բարեկամության պայմանագիրը և արձակում վերջիններիս ձեռքերը: Անցնելով Կովկասյան լեռնանցքներով՝ նրանք նախ գրավում են Բուն Աղվանքի տարածքը. «Սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզորագունի, որ կոչի Կուր՝ առնունին բազում գաւառս, զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարզպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաղ»[3]: Նվաճելով Կուրի ձախափնյա շրջանները՝ խազարական Խաքան՝ Ալփ-Իլիթվերի զորաբանակը «անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր. և ահա սաստիկ ամփոփէր զմարդ և զանասուն աշխարհին այնորիկ, աւար առեալ գերէին զամենայն»[4]:

Թալանելով և ավերելով Աղվանքի գավառները՝ խազարները շարժվում են Հայաստանի կենտրոնական շրջանները: Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանն իր ձեռքի տակ եղած ուժերով շարժվեց նրանց ընդառաջ, սակայն 685 թ. տեղի ունեցած ճակատամարտում, որի վայրը մեզ անհայտ է[5], այսրկովկասյան զորաբանակը պարտություն կրեց «և սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր և զբազումս ի նախարարացն և զիշխանսն Վրաց և Աղուանից»[6]: Գրիգոր Մամիկոնյանի մահով ոչ միայն Հայաստանը, այլև տարածաշրջանը կորցրին իրենց նշանավոր քաղաքական գործչին և իշխանին, որն իր գործունեությամբ բացառիկ էր Հայոց իշխանների շարքում: Ինչպես Ա. Տեր-Ղևոնդյանն է նշում, Գրիգոր Մամիկոնյանի ճկուն դիվանագիտության շնորհիվ Հայաստանում մոտ քառորդ դար խաղաղ պայմաններ ստեղծվեցին, ինչը նպաստեց երկրի զարգացմանը[7]: Մամիկոնյան երկու եղբայրների՝ Համազասպի և Գրիգորի օրոք Հայաստանը ավելի քան երեսուն տարի անկախ և ինքնուրույն էր թե՛ արտաքին և թե՛ ներքին հարցերում, որպիսին չէր եղել Հայաստանի առաջին բաժանումից ի վեր: Գրիգոր Մամիկոնյանը ոչ միայն վերամիավորված Հայաստանի իշխանն էր, այլև նրա իշխանության մեջ էին

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 221-225: Հմմտ. **Վարդանյան Ա.**, Աղվանքը VII դարի կեսերին // «ՊԲՀ», 2015, թիվ 2, էջ 250:

[2] Վարազ-Տրդատի գահակալության թվականների վերաբերյալ տե՛ս **Սվազյան Հ.**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 244-250:

[3] **Ղևոնդ**, էջ 132:

[4] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 232:

[5] Բ. Առաքելյանի հաշվումներով՝ ճակատամարտը տեղի է ունեցել 685 թ. օգոստոսի 16-ին: Տե՛ս **Առաքելյան Բ.**, Ժամանակագրական դիտողություններ // «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ, 1941, թիվ 1, էջ 63:

[6] **Ղևոնդ**, էջ 16: Տե՛ս նաև **Ասողիկ**, էջ 100:

[7] Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 101:

մտնում Վիրքը, Աղվանքը՝ մինչև Ճորա Պահակ: Այդ շրջանն իրավամբ կարելի է համարել հայկական պետականության կայացման և զարգացման ժամանակահատված:

Аргишти Варданян – ***Независимое армянское княжество при Амазаспе и Григоре Мамиконянах***

Заключенный в 652 г. армяно-арабский договор не просуществовал долго, и спустя короткое время арабы завоевали всю Армению. Однако возобновившиеся с новой силой арабо-византийские войны дали возможность правящей армянской элите сориентироваться в сложившейся ситуации и оградить страну от внешних угроз. Амазасп Мамиконян, ставший в 655 г. армянским князем, смог за короткий период объединить армянские земли, которые в результате тех или иных обстоятельств оказались вне состава Армении. Благодаря армянским князьям спустя около трех столетий Армения вновь предстала в регионе как единое государство. А в период длительного правления Григора Мамиконяна еще больше укрепилась самостоятельность страны и были созданы условия для развития экономики. Благодаря двум братьям Мамиконянам объединенная Армения восстановила свое место и роль в регионе.

Argishti Vardanyan – ***The Armenian Independent Principality during the Rule of Hamazasp and Grigor Mamikonyans***

The Armenian-Arab treaty of 652 did not last long, and the Arabs soon occupied the entire Armenia. However, due to the renewed Arab-Byzantine wars, Armenia's leading elite managed to keep the country safe from external threats. Acting as the Armenian Prince from the year 655, Hamazasp Mamikonyan reunited the Armenian lands in a short time, which for some reason were not part of Armenia. Thanks to Armenian princes, three centuries later Armenia became a single state in the region. While during the rule of Grigor Mamikonyan the autonomy of the state was strengthened further and conditions for economic development were created. Thanks to brothers Mamikonyan, the united Armenia restored its place and role in the region.